



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Համառոտագիր 31

Հունիս 2014

Պետական Գնումներ

2014 թվականի ԵՄ Հրահանգներ. Կոնցեսիաներ

Թույլատրված է տպագրության Կարեն Հիլի կողմից, SIGMA ծրագրի ղեկավար



www.sigmaweb.org

This brief is published under the responsibility of the Secretary-General of the OECD. The opinions expressed and arguments employed herein do not necessarily reflect the official views of the European Union or OECD member countries, or of beneficiaries participating in the SIGMA Programme.

This document and any map included herein are without prejudice to the status of or sovereignty over any territory, to the delimitation of international frontiers and boundaries and to the name of any territory, city or area.

Ներածություն

Կոնցեսիաների Հրահանգի հրապարակումը. 2014 թվականի մարտի 28-ին երեք տարվա ծավալուն բանակցություններից հետո կոնցեսիոն պայմանագրերի շնորհմանը վերաբերող նոր 2014/23/ԵՀ Հրահանգը (Կոնցեսիաների հրահանգ)¹ հրապարակվեց *Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկատուում (ԵՄՊՏ)*՝ որպես ԵՄ գնումների կանոնների բարեփոխման “օրենսդրական փաթեթի” մաս: Մինևույն օրը հրապարակվեցին նաև պետական հատվածի պատվիրատուների և կոմունալ կազմակերպությունների կողմից գնումների կատարմանը վերաբերող և ԵՄ գնումների 2004 թվականի հրահանգներին², փոխարինող 2014/24/ԵՄ (2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը) և 2014/25/ԵՄ (2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգը)³:

Կոնցեսիաների և երկու այլ հրահանգների տեքստերը կարելի է ներբեռնել՝ օգտագործելով հետևյալ հղումը.

<http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=OJ:L:2014:094:TOC>

Կիրարկման վերջնաժամկետը. ԵՄ Անդամ երկրների կողմից Կոնցեսիաների Հրահանգն իրենց ազգային օրենսդրության մեջ փոխատեղման վերջնաժամկետը 2016 թվականի ապրիլի 18 է: Սկզբունքորեն, Կոնցեսիաների Հրահանգի դրույթները մինչև փոխատեղումը պարտադիր չեն (կամ մինչև այն ժամկետը, երբ այս դրույթները պետք է փոխատեղված լինեն, այսինքն՝ 2016 թվականի ապրիլի 18-ը): Մինչ այդ ժամկետը ծառայությունների կոնցեսիաների շնորհումն այնուամենայնիվ ենթակա է Եվրոպական Միության Արդարադատության Դատարանի (ԵՄԱԴ) կողմից նախադեպային իրավունքում սահմանած ընդհանուր սկզբունքների կիրառմանը, իսկ աշխատանքների կոնցեսիաների շնորհման նկատմամբ կիրառվում է 2004/18/ԵՀ (2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը):

Գնումների սույն համառոտագիրն ընդհանուր տեղեկություններ է տրամադրում կոնցեսիաների շնորհման նոր իրավական ռեժիմի վերաբերյալ: Այն նպատակ չունի իրականացնել Կոնցեսիաների Հրահանգի բոլոր դրույթների սպառիչ վերլուծությունը: Գնումների մեկ այլ համառոտագիր (no. 30) կենտրոնանում է 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի և 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի վրա:

¹ Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի 2014 թվականի փետրվարի 26-ի՝ կոնցեսիաների շնորհման վերաբերյալ 2014/23/ԵՄ Հրահանգ (ԵՄՊՏ L 94, 28/03/2014, էջ 1).

² Հանրային աշխատանքների, հանրային ծառայությունների և հանրային մատակարարման պայմանագրերի շնորհման ընթացակարգերի համակարգման 2004/18/ԵՀ Հրահանգ (31 մարտի 2004թ.): Ջրի, էներգիայի, տրանսպորտի և փոստային ծառայությունների ոլորտում գործող կազմակերպությունների գնումների ընթացակարգերի համակարգման 2004/17/ԵՀ Հրահանգ (31 մարտի 2004թ.).

³ Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի 2014 թվականի փետրվարի 26-ի՝ պետական գնումներին վերաբերող և 2004/18/ԵՀ Հրահանգը չեղարկող 2014/24/ԵՄ Հրահանգը (ԵՄՊՏ L 94, 28/03/2014, էջ 65); Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի 2014 թվականի փետրվարի 26-ի՝ ջրի, էներգիայի, տրանսպորտի և փոստային ծառայությունների ոլորտում գործող կազմակերպությունների գնումների ընթացակարգերին վերաբերող և 2004/17/ԵՀ Հրահանգը չեղարկող 2014/25/ԵՄ Հրահանգ (ԵՄՊՏ, L 94, 28/03/2014, էջ 243).

Կոնցեսիաների շնորհման Հրահանգի ընդունման պատճառները. Պետական գնումները շուկայի վրա հիմնված այն գործիքներից մեկն է, որը կարող է օգտագործվել իսելացի, կայուն և ընդգրկուն աճի Եվրոպա 2020⁴ ռազմավարությունն իրականացնելու համար՝ նպատակ ունենալով.

- բարելավել գործարարության պայմանները նորարարություն իրականացնելու համար
- խրախուսել կանաչ գնումների ավելի շատ կիրառումը
- ապահովել հանրային ֆինանսների ամենաարդյունավետ օգտագործումը
- Բաց պահել գնումների շուկան՝ ողջ ԵՄ-ի համար:

Այս համատեքտում կոնցեսիոն պայմանագրերը դիտվում են որպես ենթակառուցվածքների և ռազմավարական ծառայությունների երկարատև կառուցվածքային զարգացման կարևոր գործիքներ, որոնք նպաստում են ներքին շուկայում մրցակցության զարգացմանը՝ հնարավորություն ընձեռելով օգուտ քաղել մասնավոր հատվածի փորձից և օգնում են հասնել արդյունավետության և նորարարության: Համարվում էր, որ ԵՄ մակարդակում կոնցեսիոն պայմանագրերի շնորհումը կանոնակարգող հստակ կանոնների բացակայությունը առաջացնում էր իրավական անորոշություն և ստեղծում էր ծառայությունների ազատ մատուցման խոչընդոտներ՝ խաթարելով ներքին շուկայի գործունեությունը: Հետևաբար, Եվրոպական Հանձնաժողովը նպատակ ուներ ստեղծել կոնցեսիոն պայմանագրերի շնորհման համարժեք, հավասարակշռված և ճկուն իրավական շրջանակ՝ թույլատրելու ԵՄ կոնցեսիոն շուկաների արդյունավետ և ոչ խտրական հասանելիությունը տնտեսվարող սուբյեկտների, մասնավորապես, փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար:

Այն դեպքում, երբ աշխատանքների կոնցեսիաների շնորհման նկատմամբ կիրառվում էր և դեռևս կիրառվում է 2004/18/ԵՀ (2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը), ծառայությունների կոնցեսիաների նկատմամբ կիրառվում էին “ընդամենը” Եվրոպական Միության Գործունեության վերաբերյալ Պայմանագրի (ԵՄԳՊ) սկզբունքները: Կոնցեսիաների նմանատիպ կանոնակարգման հետ կապված ռիսկերն ազգային օրենսդիրների կողմից տարբեր մեկնաբանություններ էին ստացել, ինչպես հաստատվել է կոնցեսիոն պայմանագրերի շնորհման որոշ, բայց ոչ բոլոր տարրերի վերաբերյալ ԵՄԱԴ ծավալուն նախադեպային իրավունքով: Կոնցեսիաների Հրահանգը նպատակ ունի բարելավել իրավական որոշակիությունը՝ ստեղծելով Անդամ երկրների կողմից ԵՄԳՊ սկզբունքների միասնական կիրառման հաստատուն կարգավորիչ հիմք: ԵՄ օրենսդիրների նպատակն էր ընդունել հստակ և պարզ կանոններ, որոնք կիրառելի կլինեն որոշակի շեմից բարձր կոնցեսիաների պայմանագրերի շնորհման նկատմամբ և միաժամանակ կարտացոլեն կոնցեսիաների առանձնահատկությունները՝ ի համեմատություն հանրային պայմանագրերի: Կանոնները նպատակ ունեն ապահովել կոնցեսիոն

⁴ Տես Եվրոպական Հանձնաժողով (3 մարտի 2010 թ.) “Հաղորդագրություն Հանձնաժողովից – Եվրոպա 2020 – Խելացի, կայուն և ընդգրկուն աճի ռազմավարություն”.

պայմանագրերի շնորհման ազգային ընթացակարգերի նվազագույն համակարգումը: Նմանապես կարևոր էր այն, որ այս կանոնները պետք է ապահովեին կոնցեսիաների շնորհման ընթացակարգերի թեկնածուների և մասնակիցների համարժեք դատական պաշտպանությունը՝ այս ընթացակարգերը բողոքարկման 89/665/ԵՏՀ և 92/13/ԵՏՀ Հրահանգների շրջանակի մեջ մտցնելով:

Կոնցեսիաների Հրահանգը շեշտում է Անդամ երկրների ազատությունը՝ կազմակերպել աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը իրենց կարիքների համաձայն՝ օգտագործելով իրենց ռեսուրսները, համագործակցելով այլ մարմինների հետ կամ պատվիրակելով այս առաջադրանքները երրորդ կողմի: Հետևաբար, Հրահանգը չի նախատեսում հանրային կամ մասնավոր կազմակերպություններին վերապահված ընդհանուր տնտեսական շահ ներկայացնող ծառայությունների ազատականացում կամ նմանատիպ ծառայություններ մատուցող հանրային կազմակերպությունների մասնավորեցում:

Պետք է նաև հաշվի առնել, որ Կոնցեսիաների Հրահանգը գործ չունի Հանրային-Մասնավոր Գործընկերություններին (ՀՄԳ) վերաբերող պահանջի հետ՝ ունենալ կա՛մ Հանրային Հատվածի Հրահանգով կարգավորվող հանրային պայմանագրի, կա՛մ Կոնցեսիաների Հրահանգով կառավարվող կոնցեսիայի իրավական ձև:

Կոնցեսիաների Հրահանգի կառուցվածքը և բովանդակությունը

Կոնցեսիաների Հրահանգը կառուցված է հետևյալ կերպ.

- Դեկլարատիվ մաս
- Բովանդակություն
- Հոդվածներ պարունակող վերնագրեր՝ բաժանված գլուխների, վերջիններս էլ՝ բաժինների:
- Հավելվածներ

Հրահանգների դեկլարատիվ մասի դրույթները գործող դրույթներ չեն: Նրանք պարունակում են հոդվածներում ներառված գործող դրույթների ենթատեքստը և բացատրությունը: Դեկլարատիվ մասը տեղեկությունների օգտակար աղբյուր է, որն օժանդակում է հոդվածների մեկնաբանմանը:

Հավելվածները պարունակում են հոդվածներում հղում արված լրացուցիչ և փոխլրացնող տեղեկությունները և պահանջները, ինչպիսիք են օրինակ՝ պատվիրատու կազմակերպությունների գործողությունները և կոնցեսիայի հայտարարության բովանդակությունը:

Կոնցեսիաների Հրահանգի պարտադիր և ոչ պարտադիր դրույթները. Հոդվածների մեծամասնությունը պարտադիր են, հետևաբար Անդամ երկրները պարտավոր են կիրարկել դրանք: Սա վերաբերում է մասնավորապես սահմանումներին և հրահանգի գործողության ոլորտին: Որոշ հոդվածներ ոչ պարտադիր են, ինչը նշանակում է, որ Անդամ երկրներն ունեն ընտրության հնարավորություն՝ դրանք

կիրարկելու կամ չկիրարկելու, ինչպես նաև կիրարկման եղանակի հարցում: Այս ընտրությունը վերաբերում է, օրինակ, կոնցեսիայի շնորհմանը հանգեցնող ընթացակարգերի⁵ կամ հաղորդակցության կանոններին⁶:

Հղում օգտակար համացանցային էջերի.

http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/modernising_rules/reform_proposal/s/index_en.htm

Կոնցեսիաների Հրահանգի բովանդակությունը

Վերնագիր I – Առարկան, գործողության շրջանակը, սահմանումները և շեմերը

Կոնցեսիաների Հրահանգը կանոնակարգում է աշխատանքների և ծառայությունների կոնցեսիաների շնորհումը տնտեսվարող սուբյեկտներին (i) պատվիրատուների կամ (ii) պատվիրատու կազմակերպությունների կողմից՝ պայմանով, որ աշխատանքները կամ ծառայություններն ուղղված են Հրահանգի Հոդված II-ում նշված գործունեության իրականացմանը (այսինքն՝ որոշակի ոլորտում գործունեության, ինչպիսին է էներգիան, հանրային ուղևորափոխադրումները, աշխարհագրական տեղանքների հետազոտում և փոստային ծառայություններ – տես ստորև)⁷:

“Պատվիրատու” հասկացությունը համապատասխանում է և՛ 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում (2004/18/ԵՀ), և՛ 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում (2014/24/ԵՄ) կիրառվող հասկացությանը և այսպիսով, վերաբերում է նաև հանրային կազմակերպությունների կողմից կոնցեսիայի պայմանագրերի շնորհմանը: Կոնցեսիաների Հրահանգը կանոնակարգում է հրահանգի Հավելված II-ում նշված տնտեսական գործունեություն իրականացնող “պատվիրատու կազմակերպությունների” կողմից կոնցեսիաների շնորհումը: Այս պատվիրատու կազմակերպությունները կարող են լինել պետական մարմիններ, հանրային կազմակերպություններ, կամ որպես բացառություն՝ բացառիկ կամ հատուկ իրավունքների հիման վրա գործող մասնավոր կազմակերպություններ: Նման “բացառիկ” կամ “հատուկ” իրավունքներն այն իրավունքներն են, որոնք շնորհվել են Անդամ երկրի իրավասու մարմնի կողմից՝ օրենքի, կանոնակարգի կամ հրապարակված վարչական դրույթի միջոցով, որը համապատասխանում է ԵՄԳՊ-ին: Նման իրավունքները սահմանափակում են գործունեության իրականացումը երկու կամ ավելի տնտեսվարող սուբյեկտներով, ինչը էականորեն ազդում է այդ գործունեությունը այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացնելու հնարավորության վրա:⁸ Հավելված II-ում նշված գործունեության տեսակներից մեկն իրականացնող պատվիրատու կազմակերպությունների նկատմամբ չի տարածվում Կոնցեսիաների Հրահանգը, եթե նման իրավունքները ԵՄԳՊ-ի համաձայն շնորհվել են օբյեկտիվ չափորոշիչների վրա հիմնված ընթացակարգի միջոցով և եթե դրանք համապատասխան կարգով հրապարակվել են:

⁵ Տես հոդված 30 և այլն.

⁶ Տես հոդված 29.

⁷ Տես հոդված 1.

⁸ Տես հոդված 5 պարագրաֆներ 10 և 11.

Հավելված II-ում նշված գործունեության տեսակները ներառում են գործունեություն կապված՝

- էլեկտրաէներգիայի, գազի կամ ջեռուցման արտադրության, տեղափոխման կամ բաշխման հետ՝ կապված հանրությանը ծառայությունների մատուցման նպատակով ֆիքսված ցանցերի տրամադրման կամ գործարկման և նման ֆիքսված ցանցերի էլեկտրաէներգիայի, գազի կամ ջեռուցման մատակարարման հետ;
- Հանրությանը երկաթուղային, ավտոմատացված համակարգերի, տրամվայի, տրոլեյբուսի, ավտոբուսի կամ ճոպանուղու տրանսպորտային ծառայություններ մատուցող ֆիքսված ցանցերի տրամադրման կամ գործարկման հետ;
- աշխարհագրական տեղանքի հետազոտություն՝ օդային, ծովային կամ ներքին ջրային ուղիներով փոխադրողներին օդանավակայանների, ծովային կամ ներքին նավահանգիստների կամ այլ կայանային հարմարությունների տրամադրման հետ;
- փոստային ծառայությունների մատուցման հետ;
- նավթի կամ գազի արդյունահանման կամ ածուխի կամ այլ պինդ վառելանյութերի հետազոտման կամ արդյունահանման նպատակով աշխարհագրական տեղանքի հետազոտության հետ:

Կոնցեսիաների Հրահանգը պարունակում է մի շարք սահմանումներ, ներառյալ՝ “աշխատանքի կոնցեսիայի” և “ծառայությունների կոնցեսիայի” հասկացությունների սահմանումները:⁹ Այս կոնցեսիաները սահմանված են որպես դրամական շահով պայմանավորված գրավոր պայմանագրեր, որոնց միջոցով մեկ կամ մի քանի պատվիրատուներ կամ պատվիրատու կազմակերպություններ աշխատանքների/ծառայությունների իրականացումը վստահում են մեկ կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների և որոնց համար փոխհատուցումն իրենից ներկայացնում է կա՛մ միայն պայմանագրի առարկա հանդիսացող աշխատանքների արդյունքն օգտագործելու իրավունք, կա՛մ այդ իրավունքը՝ վճարի հետ մեկտեղ: Հրահանգը պարզաբանում է, որ կոնցեսիայի գաղափարը պահանջում է կոնցեսիոներին այս աշխատանքների կամ ծառայությունների շահագործման գործառնական ռիսկի փոխանցում, ինչը ներառում է պահանջարկի ռիսկը, մատակարարման ռիսկը կամ երկուսն էլ: Ենթադրվում է, որ կոնցեսիոները ստանձնում է գործառնական ռիսկը, երբ սովորական գործառնական պայմաններում երաշխավորված չէ կոնցեսիայի առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման համար իրականացված ներդրումների կամ ծախսերի վերադարձը: Հրահանգը չի սահմանում, թե ինչ պետք հասկանալ “սովորական գործառնական պայմաններ” ասելով: Այնուամենայնիվ, կոնցեսիոներին փոխանցված ռիսկի մասը պետք է հանգեցնի նրան, որ կոնցեսիոները ենթակա լինի շուկայի փոփոխություններին: Գործառնական ռիսկը պետք է բխի կողմերի հսկողությունից դուրս գտնվող գործոններից: Կոնցեսիոներին կողմից վատ կառավարման, պայմանագրերի չկատարման կամ *ֆորս մաժոր* հանդիսացող դեպքերի հետ կապված ռիսկերը աշխատանքները/ծառայությունները կոնցեսիա որակելու նպատակով որոշիչ չեն, քանի որ այս ռիսկերը բնորոշ են բոլոր պայմանագրերին: Որպես հետևանք, այն դեպքում, երբ ոլորտին հատուկ

⁹ Տես հոդված 5, պարագրաֆ 1.

կանոնակարգերը վերացնում են ռիսկը՝ կոնցեսիոներին երաշխավորելով կոնցեսիայի գործարկման հետ կապված ներդրումների և ծախսերի կորստի անհնարիությունը, այդ պայմանագիրը չի կարող որակվել որպես կոնցեսիա: Նմանապես, այն պայմանագիրը, որի համաձայն կապալառուն վարձատրվում է կանոնակարգված սակագների հիման վրա, որոնք հաշվարկված են այնպես, որ ծածկում են ծառայությունների մատուցման համար կապալառուի կրած բոլոր ծախսերը և իրականացրած ներդրումները, որակվում են որպես հանրային պայմանագիր, այլ ոչ թե կոնցեսիա:

Կոնցեսիաների Հրահանգը նաև պարզաբանում է, որ որոշ համաձայնություններ, օրինակ՝ երբ որոշակի հատուկ պայմաններ բավարարող բոլոր տնտեսվարող սուբյեկտներն իրավասու են իրականացնել տրված առաջադրանքն առանց որևէ ընտրողականության (ինչպիսին է օրինակ սպառողների կողմից ընտրության համակարգերը)¹⁰, չպետք է որակվեն որպես կոնցեսիաներ: Ի լրումն, եթե տնտեսական գործունեության իրականացման համար Անդամ երկիրը կամ նրա որևէ պետական մարմին սահմանում է գործողությունների միջոցով պայմանների բավարարում, ինչպիսին է լիազորումը կամ լիցենզավորումը, երբ գործունեության իրականացումը շնորհվում է տնտեսվարող սուբյեկտի հարցմամբ և ոչ թե պատվիրատուի նախաձեռնությամբ և երբ տնտեսվարող սուբյեկտը ազատ է հրաժարվել աշխատանքների կատարումից կամ ծառայությունների մատուցումից, սա ևս չպետք է համարվի կոնցեսիա¹¹: Նույնը վերաբերում է այն համաձայնություններին, որոնց առարկան տնտեսվարող սուբյեկտների կողմից հանրային կամ մասնավոր իրավունքով կարգավորվող որոշակի հասարակական տիրույթների կամ ռեսուրսների շահագործման իրավունքն է, ինչպիսին է օրինակ հողը կամ ցանկացած պետական սեփականություն, և եթե պետությունը կամ պատվիրատուն սահմանում են դրանց օգտագործման ընդհանուր միայն պայմանները՝ առանց որոշակի աշխատանքների կամ ծառայությունների գնման¹²: Այս դրույթը վերաբերում է, օրինակ՝ հանրային տիրույթների կամ հողի վարձակալության պայմանագրերին, որոնք հիմնականում պարունակում են վարձակալի կողմից իր օգտագործմանը հանձնված սեփականության տիրապետմանը, սեփականության պահպանման հետ կապված վարձատուի և վարձակալի համապատասխան պարտականություններին, վարձակալության և վարձակալի տիրապետմանը հանձնման ժամկետներին և վարձատուին վճարվող վարձավճարներին ու լրացուցիչ վճարներին վերաբերող դրույթներ:

Կոնցեսիաների Հրահանգը կիրառվում է աշխատանքների և ծառայությունների այն կոնցեսիաների նկատմամբ, որոնք ունեն 5 186 000 եվրո կամ այդ շեմը գերազանցող արժեք¹³:

¹⁰ Այլ օրինակներ կարող են լինել տնտեսական գործունեության տեսակներ, որոնք բաց են ցանկացած հետաքրքրված անձի համար՝ պայմանով, որ այս անձը բավարարում է այդ գործունեության իրականացումը կանոնակարգող որոշակի օբյեկտիվ չափորոշիչները, ինչպիսիք են օրինակ շինարարության ինժեներները, իրավաբանները կամ տաքսու վարորդները (կախված ազգային իրավունքից):

¹¹ Այս կանոնը կարող է կիրառվել այն ծառայությունների նկատմամբ, որոնք ազգային իրավունքի համաձայն կարող են մատուցվել միայն պետական մարմնի կողմից լիցենզավորվելուց հետո, և երբ լիցենզավորված անձը կարող է որոշել պահել լիցենզիան և իրականացնել համապատասխան գործունեությունը կամ չգրադվել այդ բիզնեսով, օրինակ՝ տաքսի ծառայությունը կամ դեղատունը:

¹² օրինակ՝ հողի սեփականության գործակալները:

¹³ Հաշվարկման մեթոդի բոլոր մանրամասների համար տես հոդված 8:

Կոնցեսիայի արժեքը պետք է հաշվարկվի՝ հիմք ընդունելով պայմանագրի գործողության ընթացքում կոնցեսիայի առարկա հանդիսացող ծառայությունների և աշխատանքների համար փոխհատուցումը, ինչպես նաև նման աշխատանքների և ծառայությունների համար պահանջվող մատակարարումների համար կոնցեսիոնների ստացած ընդհանուր գուտ շրջանառությունը, ինչպես հաշվարկված է պատվիրատուի կամ պատվիրատու կազմակերպության կողմից: Համապատասխան արժեքը կոնցեսիայի հայտարարության ուղարկման պահին ունեցած արժեքն է և պատվիրատուն, հետևաբար, պարտավոր է *ex ante* (նախապես) հաշվարկել կոնցեսիայի պայմանագրի արժեքը: Այնուամենայնիվ, եթե կոնցեսիայի արժեքը կոնցեսիայի շնորհման ժամանակ գերազանցում է նախահաշվային արժեքը ավելի, քան 20 տոկոսով, վավեր է շնորհման ժամանակ կոնցեսիայի արժեքի հաշվարկը: Այս դրույթը նպատակ ունի կանոնակարգերը շրջանցելը դարձնել ավելի դժվար: Այնուամենայնիվ, թվում է, թե այս դրույթը կիրառվում է միայն այն դեպքում, երբ կոնցեսիաների պայմանագրի արժեքը շնորհման ժամանակ ոչ միայն գերազանցում է սկզբնական նախահաշվային գինը ավելի, քան 20 տոկոսով, այլ նաև գերազանցում է 5 186 000 եվրոյի շեմը: Եթե կոնցեսիաների շնորհման հայտարարությունը չի հրապարակվել Կոնցեսիաների Հրահանգի պայմանների համաձայն, այն պետք է չեղյալ համարվի և հրապարակվի կրկին՝ այս անգամ համապատասխանելով Կոնցեսիաների Հրահանգին: Ինչպես և հանրային պայմանագրերի դեպքում, կոնցեսիաների պայմանագրերի արժեքի հաշվարկը չպետք է կատարվի՝ նպատակ ունենալով շրջանցել կանոնակարգերը:

Եթե կոնցեսիայի նախահաշվային արժեքը չի հասնում նշված շեմին, դրա շնորհման նկատմամբ կիրառվում են ԵՄԳՊ սկզբունքները (այսինքն՝ ապրանքների ազատ շրջանառությունը, հիմնադրման ազատությունը և ծառայությունների մատուցման ազատությունը), և դրանցից բխող կանոնները, (ինչպիսիք են օրինակ՝ հավասար վերաբերմունքը, խտրականության բացառումը, փոխադարձ ճանաչումը, համամասնությունը և թափանցիկությունը), ինչպես ծառայությունների կոնցեսիաների շնորհման նկատմամբ կիրառվող իրավական ռեժիմի դեպքում է:

Բացառություններ

Կոնցեսիաների Հրահանգը պարունակում է իր գործողության շրջանակից բազմաթիվ բացառություններ, որոնցից շատերը համապատասխանում են 2014 թվականի այլ երկու հրահանգներում ներառված բացառություններին: Այն չի կիրառվում, ի թիվս այլոց, կոնցեսիաների նկատմամբ, որոնք շնորհվել են.

- բացառիկ իրավունքի հիման վրա՝ ԵՄԳՊ-ի համաձայն;
- օդային փոխադրման ծառայությունների համար՝ տրամադրված շահագործման լիցենզիայի հիման վրա;
- միջազգային կազմակերպության կամ միջազգային ֆինանսական ինստիտուտի կողմից և ամբողջապես ֆինանսավորվում է այդ կազմակերպության/ինստիտուտի կողմից;
- պաշտպանության և անվտանգության ոլորտում¹⁴;

¹⁴ 2009/81/ԵՇ Պաշտպանության Հրահանգում նշված՝ պաշտպանության և անվտանգության ոլորտում բացառությունների բոլոր մանրամասների համար տես հոդված 10, պարագրաֆներ 4-ից 7:

գործունեության որոշ տեսակների վերաբերող ծառայությունների համար, որոնք նաև բացառված են 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի գործողության ոլորտից, օրինակ՝ հողի, գոյություն ունեցող շենքերի կամ այլ անշարժ գույքի ձեռքբերում կամ վարձակալություն; ռադիո և տեսալսողական լրատվամիջոցների ծառայությունների համար նախատեսված ծրագրային նյութերի ձեռքբերում, մշակում, արտադրություն կամ համատեղ արտադրություն; արբիտրաժի և հաշտարարի ծառայություններ; հատուկ իրավաբանական և ֆինանսական ծառայություններ; վարկեր, շահույթ չհետապնդող կազմակերպությունների կողմից տրամադրվող քաղաքացիական պաշտպանության, քաղաքացիական պահպանության և վտանգից պաշտպանության ծառայություններ; և քաղաքական քարոզարշավ¹⁵:

Անդամ երկրի կողմից տնտեսվարող սուբյեկտին բացառիկ իրավունքի հիման վրա վիճակախաղի ծառայությունների շնորհումը

Ի լրումն վերոնշյալ բացառությունների՝ Կոնցեսիաների Հրահանգը սահմանում է որոշ հատուկ բացառություններ՝ էլեկտրոնային հաղորդակցության և ջրային ոլորտներում: Վերջին բացառումը ԵՄ Անդամ երկրներում օրենսդրական ընթացակարգի իրականացման ժամանակ հանդիսացել է լարված քննարկումների առարկա: Հրահանգը հստակեցնում է, որ Կոնցեսիաների Հրահանգը չի տարածվում խմելու ջրի արտադրության, փոխադրման և բաշխման հետ կապված հանրությանը ծառայությունների մատուցման համար նախատեսված ֆիքսված ցանցերի տրամադրման կամ գործարկման և նման ցանցերին խմելու ջրի մատակարարման կոնցեսիաների նկատմամբ: Որոշ դեպքերում կոյուղաջրերի հեռացման և մշակման և հիդրավլիկ ինժեներական ծրագրերի, ոռոգման կամ հողի դրենաժի կոնցեսիաները ևս բացառված են Կոնցեսիաների Հրահանգի գործողության ոլորտից¹⁶:

Հաջորդ կարևոր բացառությունը վերաբերում է պատվիրատուի կողմից այն փոխկապակցված կազմակերպությանը կոնցեսիայի շնորհմանը, որի նախկին երեք տարվա միջին ընդհանուր շրջանառության առնվազն 80% ստացվել է պատվիրատուին կամ փոխկապակցված այլ կազմակերպություններին (կազմակերպությունների խումբ) ծառայությունների մատուցումից կամ նրանց համար աշխատանքների կատարումից¹⁷:

Հանրային հատվածի մարմինների միջև կոնցեսիաները ևս բացառված են: Այս բացառությունը տարածվում է ն՝ ներքին գնումների, և՛ “հանրային-հանրային” համագործակցության վրա: Ներքին կոնցեսիաների շնորհումների բացառման համար պատվիրատուն պետք է այն իրավաբանական անձի նկատմամբ, ում շնորհվել է կոնցեսիան, իրականացնի հսկողություն, որը նման է մարմնի՝ իր վարչությունների նկատմամբ իրականացրած հսկողությանը: Ի լրումն՝ հսկվող իրավաբանական անձի գործունեության ավելի, քան 80%-ը պետք է կազմի պատվիրատուի կողմից իրեն վստահված առաջադրանքների կատարումը: Հսկվող իրավաբանական անձը չպետք է ունենա մասնավոր կապիտալի ուղղակի մասնակցություն՝ բացառությամբ նման մասնավոր կապիտալ մասնակցության

¹⁵ Այս բացառությունների բոլոր մանրամասների համար տես հոդված 10, պարագրաֆ 8-ի ցանկը,
¹⁶ Ջրային ոլորտում հատուկ բացառությունների բոլոր մանրամասների համար տես հոդված 12.
¹⁷ Այս բացառության հետագա մանրամասների համար տես հոդված 13.

չհսկող ձևերի, ինչպես պահանջում է ազգային օրենսդրությունը ԵՄԳՊ-ի համաձայն¹⁸:

Ի վերջո, ԵՄԱԴ նախադեպային իրավունքի¹⁹ համաձայն՝ հանրային ծառայությունների միասնական մատուցման կոնցեսիայի պայմանագրերը բացառված են Կոնցեսիաների Հրահանգի գործողության շրջանակից՝ պայմանով, որ (i) նրանք կնքվում են բացառապես պատվիրատուների կամ պատվիրատու կազմակերպությունների միջև; (ii) այդ համագործակցության իրականացումը կարգավորվում է բացառապես հանրային շահի նկատառումներով և (iii) ծառայության մատուցող որևէ մասնավոր կազմակերպություն չի հայտնվում իր մրցակիցների նկատմամբ մրցակցային ավելի շահեկան դիրքում:²⁰

Խառը պայմանագրեր

Կոնցեսիաների Հրահանգը սահմանում է հատուկ կանոններ, թե ինչպես պետք է վարվել կոնցեսիոն խառը պայմանագրերի հետ²¹, հիմք ընդունելով ԵՄԱԴ նախադեպային իրավունքը և խառը պայմանագրերին վերաբերող՝ 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում ու 2014 Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում սահմանված կանոնները: Բաժանելի կոնցեսիոն խառը պայմանագրերի դեպքում, պատվիրատուները և պատվիրատու կազմակերպությունները կարող են շնորհել առանձին կոնցեսիաներ խառը պայմանագրի առանձին մասերի համար: Այնուամենայնիվ, եթե պայմանագիրը կազմող զանազան մասերը օբյեկտիվորեն²² անբաժանելի են, կիրառելի կանոնները որոշվում են քննարկվող պայմանագրի հիմնական առարկայի առումով: Այսպիսով, կոնցեսիան, որի առարկան և՛ աշխատանքները, և՛ ծառայություններն են, պետք է շնորհվի աշխատանքի կոնցեսիաների նկատմամբ կիրառվող կանոնների համաձայն, եթե աշխատանքների տարրը բնորոշում է համապատասխան պայմանագրի հիմնական առարկան, և ընդհակառակը: Աշխատանքների և ծառայությունների կոնցեսիաների տարբերակումն իրենից դեռևս իրավական կարևորություն է ներկայացնում, քանի որ կոնցեսիաների այս երկու տեսակի շնորհման նկատմամբ կիրառվում են տարբեր ռեժիմներ: Օրինակ՝ ծառայությունների կոնցեսիաների համար գոյություն ունեն այլ բացառություններ, իսկ աշխատանքների կոնցեսիաների դեպքում ենթակապակի համար կիրառվում են այլ կանոններ: Այն դեպքում, երբ պայմանագիրը ներառում է ծառայությունների և մատակարարման կոնցեսիաների տարրեր, պայմանագրի հիմնական առարկան որոշվում է համապատասխան ծառայությունների կամ

¹⁸ Այս բացառմանը վերաբերող բոլոր մանրամասների համար տես հոդված 17.

¹⁹ Գործ C-480/06 *Stadtreinigung Hamburg*.

²⁰ Տես հոդված 17 և դեկլարատիվ բնույթի դրույթներ 45-47.

²¹ Խառը պայմանագրերն այն պայմանագրերն են, որոնք պարունակում են ավելի, քան մեկ տարր, օրինակ՝ աշխատանքներին և ծառայություններին վերաբերող պայմանագրեր կամ մատակարարում և ծառայություններ կամ պայմանագրեր, որոնք մասամբ վերաբերում են հրահանգում ընդգրկված գործունեության տեսակների և մասամբ՝ հրահանգում չընդգրկված գործունեության տեսակների:

²² ԵՄԱԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ անբաժանելիությունը որոշվում է յուրաքանչյուր գործի համար՝ հաստատելով մեկ պայմանագիր կնքելու անհրաժեշտությունը և հաշվի առնելով ատվիրատուի ակնհայտ կամ ենթադրյալ մտադրությունը՝ դիտարկել պայմանագիրը խառը դարձնող զանազան տարրերը որպես անբաժանելի, ինչը հաստատվում է նպատակները արդարացնող օբյեկտիվ ապացույցներով:

մատակարարման նախահաշվային արժեքի համաձայն, որտեղ ավելի բարձր արժեք ունեցողը հանդիսանում է պայմանագրի հիմնական առարկան:²³

Պայմանագիրը, որը ներառում է Կոնցեսիաների Հրահանգի Հավելված II-ում ընդգրկված մի քանի գործունեության տեսակներ (կոմունալ ոլորտի ծառայությունների վերաբերյալ), ենթակա է այն գործունեության համար կիրառելի կանոններին, որոնց համար այն հիմնականում նախատեսվել է: Հրահանգը պարունակում է մանրամասն դրույթներ խառը պայմանագրերի նկատմամբ կիրառելի կանոնների վերաբերյալ, երբ օբյեկտիվորեն անհնար է որոշել, թե որ գործունեության համար է հիմնականում նախատեսված պայմանագիրը:²⁴ Հրահանգը պարունակում է նաև հատուկ կանոններ այն խառը պայմանագրերի վերաբերյալ, որոնք ունեն պաշտպանության կամ անվտանգության տարրեր: Մեկ անգամ ևս շեշտենք, որ քննվող խառը պայմանագրի հատկանիշները որոշիչ են նման պայմանագրի շնորհման համար կիրառվող ռեժիմի սահմանման համար:²⁵

Կոնցեսիայի տևողությունը

Կոնցեսիաների Հրահանգը նախատեսում է, որ կոնցեսիայի տևողությունը պետք է լինի սահմանափակ, չնայած այն չի նախատեսում առավելագույն տևողություն: Այն պարզաբանում է, որ պայմանագրի ժամկետը չպետք է լինի չափազանց երկար՝ շուկայի փակումը և մրցակցության սահմանափակումը կանխելու նպատակով: Շատ երկար տևողությամբ կոնցեսիաները հավանական է, որ կհանգեցնեն շուկայի փակման և հետևաբար կխոչընդոտեն ծառայությունների ազատ տեղաշարժմանը և հիմնադրման ազատությանը:²⁶ Հետևաբար, հինգ տարին գերազանցող կոնցեսիաների դեպքում կոնցեսիայի առավելագույն տևողությունը չպետք է գերազանցի հաշվարկված այն ժամկետը, որը խելամտորեն անհրաժեշտ է կոնցեսիոներին՝ աշխատանքների կամ ծառայությունների շահագործման համար իրականացրած ներդրումները վերադարձնելու և ներդրած կապիտալից շահույթ ստանալու համար՝ հաշվի առնելով ամբողջ շահույթը, ակտիվների՝ շահույթ ստանալու կարողությունը, օգտագործողների սակագները և ակտիվների գործարկման և սպասարկման ծախսերը:

Տնտեսվարող սուբյեկտներ, հաղորդակցություն, գաղտնիություն և դասակարգիչ

Տնտեսվարող սուբյեկտի հասկացությունը պետք է ստանա լայն մեկնաբանություն՝ ընդգրկելու ցանկացած անձի և/կամ կազմակերպության, որն առաջարկում է շուկայում աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում կամ ծառայությունների մատուցում՝ անկախ այն իրավակազմակերպական ձևից, որն այն ընտրել է: Հրահանգը նաև հստակեցնում է, որ տնտեսվարող սուբյեկտների խմբերը կարող են մասնակցել կոնցեսիաների շնորհման ընթացակարգերին:²⁷

²³ Խառը պայմանագրերի բոլոր մանրամասների համար տես հոդված 20:

²⁴ Տես հոդված 22, պարագրաֆ 3.

²⁵ Պաշտպանության կամ անվտանգության տարրեր պարունակող խառը պայմանագրերի բոլոր մանրամասների համար տես հոդվածներ 21 և 23.

²⁶ Տես հոդված 18 և դեկլարատիվ բնույթի դրույթներ 52.

²⁷ Տես հոդված 26.

Բացառությամբ այն դեպքերի, երբ էլեկտրոնային միջոցների կիրառումը պարտադիր է (օրինակ՝ կոնցեսիաների շնորհման հայտարարություններ և կոնցեսիայի փաստաթղթերի էլեկտրոնային հասանելիություն²⁸) Անդամ երկրները կամ պատվիրատուները կարող են ընտրել տեղեկատվության փոխանակման հետևյալ մեկ կամ մի քանի եղանակները. էլեկտրոնային եղանակներ, փոստ կամ ֆաքս և բանավոր հաղորդակցություն: Այնուամենայնիվ Անդամ երկրները կարող են հաղորդակցության նպատակով էլեկտրոնային եղանակների կիրառումը դարձնել պարտադիր կոնցեսիաների համար:²⁹

Կոնցեսիաների Հրահանգը պարունակում է գաղտնիության վերաբերյալ հատուկ դրույթներ: Եթե այլ բան նախատեսված չէ Կոնցեսիաների Հրահանգում կամ ազգային օրենսդրության մեջ (օրինակ՝ տեղեկատվության հասանելիությանը վերաբերող օրենսդրության), պատվիրատուն կամ պատվիրատու կազմակերպությունը չեն կարող բացահայտել տեղեկությունները, որոնք տնտեսվարող սուբյեկտների կողմից համարվել են գաղտնի տեղեկություն, ներառյալ, բայց ոչ միայն տեխնիկական կամ առևտրային գաղտնիքը և հայտի գաղտնի տարրերը:³⁰

Կոնցեսիաների Հրահանգը սահմանում է, որ Գնումների Միասնական Անվանացանկը կիրառելի է որպես դասակարգիչ, որին կարելի է հղում անել կոնցեսիաների շնորհման ենթատեքստում:³¹

Վերնագիր II- Ընդհանուր կազմունքներ և կոնցեսիաների շնորհման նկատմամբ կիրառվող ընթացակարգային երաշխիքներ

Ի տարբերություն 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի՝ Կոնցեսիաների Հրահանգը չի սահմանում հատուկ ընթացակարգեր, որոնք պետք է կիրառվեն կոնցեսիան շնորհելիս: Իհարկե, Անդամ երկրները կարող են կիրառել Հանրային Հատվածի Հրահանգում սահմանված ընթացակարգերի: Պետական գնումների տեսանկյունից խելամիտ կլինեն կոնցեսիաների շնորհման համար հասանելի ընթացակարգերը մոտարկել հանրային պայմանագրերի շնորհման համար նախատեսված ընթացակարգերի հետ: Կոնցեսիաների Հրահանգը սահմանում է հիմնական դրույթները, որոնք արտացոլում են ԵՄԱԴ նախադեպային իրավունքից բխող ընդհանուր սկզբունքները և ընթացակարգային երաշխիքները՝ նպատակ ունենալով ապահովել թափանցիկությունը և հավասար վերաբերմունքը: ԵՄ օրենսդիրների տեսանկյունից նվազագույն համակարգումը բավարար կլինի Կոնցեսիաների Հրահանգի նպատակներին հասնելու համար: Պատվիրատուի կամ պատվիրատու կազմակերպության կողմից կոնցեսիաների ընտրությանը հանգեցնող ընթացակարգի կազմակերպման ցանկացած եղանակ կամ ձև ընտրելիս պետք է ցանկացած ժամանակ պահպանվեն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հավասար վերաբերմունքի, ոչ խտրականության և թափանցիկության սկզբունքները:³²

²⁸ Տես հոդված 33 (2) և 34.

²⁹ Տես հոդված 29.

³⁰ Տես հոդված 28.

³¹ Տես հոդված 27.

³² Տես հոդված 3 և 30.

Կոնցեսիայի հայտարարություններ

Հիմնական թափանցիկությունն ապահովելու նպատակով Կոնցեսիաների Հրահանգը պատվիրատուներին պարտադրում է հրապարակել կոնցեսիա շնորհելու իրենց մտադրությունը *ԵՄՊՏ*-ում՝ “կոնցեսիայի հայտարարության” միջոցով: Հրապարակման այս պարտավորությունից ցանկացած վերապահման նկատմամբ կիրառվում են խիստ պայմաններ և ԵՄԱԴ նախադեպային իրավունքի համաձայն, դրանք պետք է սահմանափակ մեկնաբանություն ստանան:

Կոնցեսիայի պայմանագրի շնորհումն առանց հայտարարության նախնական հրապարակման հնարավոր է միայն, եթե (i) ի սկզբանե պարզ է, որ նման հայտարարությունը չէր խթանի ավելի շատ մրցակցություն, քանի որ օբյեկտիվորեն միայն մեկ տնտեսվարող սուբյեկտ է ունակ իրականացնել պայմանագիրը; (ii) կոնցեսիայի նպատակը բացառիկ արվեստի գործի կամ գեղարվեստական ներկայացման ստեղծումը կամ ձեռքբերումն է; (iii) մրցակցությունը բացակայում է տեխնիկական պատճառներով կամ բացառիկ իրավունքների գոյության կամ մտավոր սեփականության իրավունքների կամ այլ բացառիկ իրավունքների պաշտանության պատճառով; կամ (iv) չի ներկայացվել (համապատասխան) հայտ կամ հայտերը ներկայացվել են կոնցեսիայի նախնական ընթացակարգին ի պատասխան՝ պայմանով, որ կոնցեսիոն պայմանագրի սկզբնական պայմանները էականորեն չեն փոփոխվել:³³

Կոնցեսիաների Հրահանգը նախատեսում է, որ կոնցեսիայի հայտարարությունը պետք է պարունակի որոշակի տեղեկություններ, ներառյալ՝ պատվիրատուի կամ պատվիրատու կազմակերպության անվանումը, հասցեն և տեսակը, իրականացվող հիմնական գործունեությունը, կոնցեսիայի նկարագիրը, մասնակցության պայմանները և դիմումների կամ հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Հրահանգը պարտավորեցնում է պատվիրատուներին կիրառել Հանձնաժողովի՝ կոնցեսիայի հայտարարությունների ստանդարտ ձևաչափը, որը պետք է էլեկտրոնային եղանակով ուղարկվի ԵՄ Հրապարակումների Գրասենյակ՝ *ԵՄՊՏ*-ում հրապարակելու համար:³⁴ Ավելին, պատվիրատուները պարտավոր են առաջարկել կոնցեսիայի փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով, անվճար, անխոչընդոտ և ուղղակի հասանելիություն:³⁵

Թեկնածուների ընտրությունը և շնորհման չափորոշիչները

Կոնցեսիաների Հրահանգը սահմանում է կանոններ թեկնածուների ընտրության և որակական գնահատման համար:³⁶ Այս կանոնները համապատասխանում են Հանրային Հատվածի Հրահանգում աշխատանքների և ծառայությունների պայմանագրերի շնորհման համար սահմանած պահանջներին, որոնք պարտավորեցնում էին պատվիրատուներին ստուգել թեկնածուների և մասնակիցների մասնագիտական և տեխնիկական կարողությունները, ինչպես նաև ֆինանսական և տնտեսական վիճակը՝ հայտարարությունների և/կամ որպես ապացույց ներկայացված տեղեկանքների հիման վրա: Մասնակցության

³³ Կոնցեսիայի հայտարարության և վերապահումների վերաբերյալ բոլոր մանրամասների համար տես հոդված 31.

³⁴ Տես հոդված 33.

³⁵ Կոնցեսիոն փաստաթղթերի էլեկտրոնային հասանելիության բոլոր մանրամասների համար տես հոդված 34.

³⁶ Տես հոդված 38 բոլոր մանրամասների համար.

պահանջները պետք է լինեն ոչ խտրական, կոնցեսիայի առարկային համամասն և պետք է նշված լինեն կոնցեսիայի հայտարարության մեջ: Ինչպես և հանրային պայմանագրերի դեպքում, տնտեսվարող սուբյեկտները պետք է հնարավորություն ունենան կոնցեսիայի շնորհման ընթացակարգի ժամանակ ապավինել այլ կազմակերպությունների կարողություններին:

Պատվիրատուները պետք է պարզեն, որ կոնցեսիայի ընթացակարգի շնորհումից տնտեսվարող սուբյեկտի բացառման (պարտադիր և/կամ ոչ պարտադիր) հիմքեր առկա չեն: Տնտեսվարող սուբյեկտները, որոնք վերջնական դատավճռով դատապարտվել են նշված հանցագործությունների համար, ինչպիսիք են, օրինակ՝ խարդախությունը, կոռուպցիան կամ հանցավոր կազմակերպությունում մասնակցությունը, պետք է բացառվեն ընթացակարգից: Այնուամենայնիվ, տնտեսվարող սուբյեկտները պետք է հնարավորություն ունենան տրամադրել ապացույցներ, որոնք կփաստեն, որ ձեռնարկված միջոցները բավարար են՝ ապացուցելու իր հուսալիությունը՝ չնայած բացառման հիմքերի գոյությանը:

Այս միջոցառումները կարող են կազմված լինել մասնավորապես (i) կազմակերպչական և աշխատակազմին վերաբերող միջոցառումներից, ինչպիսին է, օրինակ՝ իրավախախտման մեջ ներգրավված բոլոր անձանց կամ կազմակերպությունների հետ բոլոր տեսակի կապերի խզումը; (ii) աշխատակազմի վերակազմակերպման միջոցառումներ; և (iii) հաշվետվողականության և հսկողական համակարգերի կիրարկումը: Անդամ երկրներն իրենք են որոշում յուրաքանչյուր նման դեպքի համար կիրառվող ստույգ ընթացակարգային և էական պայմանները: Այսպիսով, նրանք կարող են որոշել, թե արդյոք առանձին պատվիրատուներ պետք է իրականացնեն տնտեսվարող սուբյեկտների համապատասխան գնահատումը, թե այս պարտավորությունը պետք է իրականացվի կենտրոնական կամ ապակենտրոնացված մակարդակի այլ մարմինների կողմից:³⁷

Կոնցեսիաների Հրահանգը սահմանում է կոնցեսիայի շնորհման ընթացակարգի դիմումների և հայտերի ներկայացման նվազագույն ժամկետներ: Դիմումների ստացման նվազագույն ժամկետը 30 օրն է՝ հաշված կոնցեսիայի հայտարարության հրապարակման օրից: Եթե ընթացակարգը կազմակերպված է հաջորդական փուլերով, նախնական հայտի ստացման նվազագույն ժամկետը 22 օր է՝ հաշված հրավերի ուղարկման օրից:³⁸

Կոնցեսիաները պետք է շնորհվեն շնորհման օբյեկտիվ չափոշիների հիման վրա, որոնք կապված են կոնցեսիայի առարկայի հետ և համապատասխանում են հավասար վերաբերմունքի, ոչ խտրականության և համամասնության ընդհանուր սկզբունքներին: Շնորհման չափորոշիչները պետք է թվարկվեն կարևորության նվազման կարգով և պետք է նախապես տեղեկացվեն բոլոր մասնակիցներին: Միայն բացառիկ դեպքերում է թույլատրվում պատվիրատուին փոփոխել շնորհման չափորոշիչների հերթականությունը: Բացառիկ դեպք կարող է լինել, օրինակ՝ նորարարական լուծումները հաշվի առնելու անհրաժեշտությունը, որոնք չեն

³⁷ “Ինքնամաքրման” հնարավորությունների վերաբերյալ հետագա մանրամասների մասին տես հոդված 38, պարագրաֆ 9 և դեկլարատիվ բնույթի դրույթներ 70-71.

³⁸ Տես հոդված 39.

կարող կանխատեսվել բարեխիղճ պավիրատուի կողմից և առանց նման փոփոխության շնորհման չափորոշիչները կլինեին խտրական:³⁹

Կոնցեսիաների Հրահանգը պարտավորեցնում է պատվիրատուներին հնարավորինս շուտ տեղեկացնել թեկնածուներին կամ մասնակիցներին շնորհման ընթացակարգի վերաբերյալ ընդունված որոշումների մասին, ներառյալ՝ հաղթած մասնակցի անունը, այլ դիմումների կամ հայտերի մերժման հիմքերը և, եթե կիրառելի է, պայմանագիր ընդհանրապես չշնորհելու որոշման հիմքերը: Համապատասխան կողմի/կողմերի պահանջով պատվիրատուն հնարավորինս շուտ, գրավոր դիմում ստանալուց առնվազն 15 օրվա ընթացքում պետք է տեղեկացնի ընդունելի հայտ ներկայացրած ցանկացած մասնակցի (մասնակիցների) ընտրված հայտի հատկանիշների և համեմատական առավելությունների մասին:⁴⁰

Կոնցեսիաների կատարման կանոններ – ենթակապալ, պայմանագրի փոփոխություններ, լուծում, մոնիտորինգ և հաշվետվություններ

Կոնցեսիաների Հրահանգը հատուկ կանոններ է պարունակում ենթակապալի վերաբերյալ, որոնք նման են Հանրային Հատվածի Հրահանգում նախատեսված կանոններին: Այն պահանջում է կամ թույլատրում է պատվիրատուներին հայտատուներից պահանջել նշելու առաջարկվող ենթակապալառուներին և կոնցեսիայի այն մասը, որի համար վերջինս մտադիր է կնքել ենթակապալի պայմանագիր: Կոնցեսիոնները պետք է տրամադրի տեղեկություններ ենթակապալառուների (անուն, կապ հաստատելու տվյալներ, իրավական ներկայացուցչություն) և պատվիրատուի ուղղակի հսկողության տակ աշխատող ենթակապալառուների ցանկացած փոփոխության մասին: Այս պահանջը, որը վերաբերում է աշխատանքների կոնցեսիաներին և ծառայությունների կոնցեսիաներին, պետք է բավարարվի պայմանագրի շնորհումից հետո և մինչև ամենաուշը պայմանագրի կատարման սկիզբը: Պատվիրատուները կարող են տարածել այս պահանջները, օրինակ՝ ենթակապալի շղթայում ավելի ներքև գտնվող ենթակապալառուների նկատմամբ:⁴¹

ԵՄ օրենսդիրն ընդունում է, որ անհրաժեշտ է սահմանել գործողության ընթացքում կոնցեսիայի պայմանագրում փոփոխությունների կատարման մեխանիզմներ, քանի որ այս պայմանագրերը որպես կանոն ներառում են երկարաժամկետ և բարդ տեխնիկական և ֆինանսական սխեմաներ, որոնց վրա հաճախ ազդում են փոփոխվող հանգամանքները: Կոնցեսիաների Հրահանգը սահմանում է հետևյալ հանգամանքները, որոնց դեպքում թույլատրվում է փոփոխել կոնցեսիայի պայմանագիրը՝ առանց կոնցեսիայի շնորհման նոր ընթացակարգի իրականացման:⁴²

- Փոփոխությունները՝ անկախ իրենց դրամական արժեքի, նախատեսված են եղել կոնցեսիայի նախնական փաստաթղթերում վերանայման հստակ, պարզ և միանշանակ դրույթներում, որոնք կարող են ներառել արժեքի վերանայման դրույթներ կամ տարբերակներ;

³⁹ Մանրամասների համար տես հոդված 41.

⁴⁰ Տես հոդված 40.

⁴¹ Ենթակապալի վերաբերյալ բոլոր մանրամասների համար տես հոդված 42.

⁴² Կոնցեսիաների փոփոխությունների բոլոր մանրամասների համար տես հոդված 43.

- Առաջացել է սկզբնական կապալառուի կողմից լրացուցիչ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման անհրաժեշտություն, որոնք ընդգրկված չեն եղել սկզբնական կոնցեսիայում, սակայն կապալառուն չի կարող փոխվել (i) տնտեսական կամ տեխնիկական պատճառներից ելնելով (ինչպիսին են օրինակ գոյություն ունեցող սարքերի կամ ծառայությունների հետ համափոխարինելիության կամ փոխգործակցման պահանջները); կամ (ii) նման փոփոխության պատճառած էական անհարմարությունների կամ ծախսերի էական կրկնման պատճառով՝ պայմանով, որ արժեքի ցանկացած ավելացում չպետք է գերազանցի սկզբնական կոնցեսիայի արժեքի 50%-ը (եթե կատարվել են մի քանի հաջորդական փոփոխություններ, սահմանափակումը կիրառվում է յուրաքանչյուր փոփոխության արժեքի նկատմամբ⁴³);
- Պահանջվող փոփոխությունը (i) առաջացել է արտաքին հանգամանքների պատճառով, որոնք բարեխիղճ պատվիրատուն չէր կարող կանխատեսել; (ii) չի խաթարում կոնցեսիայի ընդհանուր բնույթը; և (iii) ներառում է արժեքի ավելացում, որը չի գերազանցում նախնական կոնցեսիայի արժեքի 50%-ը (եթե կատարվել են մի քանի հաջորդական փոփոխություններ, սահմանափակումը կիրառվում է յուրաքանչյուր փոփոխության արժեքի նկատմամբ):
- Նոր կոնցեսիոները փոխարինում է սկզբնական կոնցեսիոներին (i) վերանայման միանշանակ, հստակ և պարզ դրույթի կամ տարբերակի հիման վրա; կամ (ii) կոնցեսիոների ընդհանուր կամ մասնակի իրավահաջորդության; կամ (iii) պատվիրատուի կողմից կոնցեսիոների ենթակապալառուների նկատմամբ պարտավորությունների ստանձնման հետևանքով:⁴⁴
- Փոփոխությունները էական չեն:
- Փոփոխության արժեքը ցածր է հետևյալ երկու արժեքներից. կոնցեսիաների շեմ (ներկայումս 5 186 000 եվրո) և սկզբնական կոնցեսիայի արժեքի 10%:

Անդամ երկրները պետք է ապահովեն, որ պատվիրատուները ազգային իրավունքով սահմանված պայմանների համաձայն հնարավորություն ունեն լուծելու պայմանագիրը դրա գործողության ընթացքում, եթե հետևյալ պայմաններից մեկը կամ մի քանիսը բավարարված են⁴⁵.

⁴³ Անհրաժեշտ է նշել, որ հրահանգի ձևակերպման համաձայն, թվում է, որ արժեքի ավելացումը կիրառվում է հաջորդական փոփոխությունների յուրաքանչյուր դեպքի համար՝ անկախ կոնցեսիայի արժեքի նախկին բարձրացումներից: Այնուամենայնիվ, Հրահանգը հստակեցնում է, որ նման հաջորդական փոփոխությունները չպետք է Կոնցեսիաների Հրահանգը շրջանցելու նպատակ ունենան:

⁴⁴ Այս բացառության գործողության շրջանակը հստակ չէ: Կարելի է ենթադրել, որ այս դրույթը կարող է արդարացնել փոխատուի “մուտքը” ՊՄԳ կոնցեսիայի ծրագրերին, եթե նման մուտքը սահմանված է դրույթում նշված վերակազմակերպման միջոցառումներից մեկի համաձայն: (Նման մեկնաբանման դեմ փաստարկ կարող է լինել այն, որ փոխատուները սովորաբար չեն բավարարում նախապես սահմանված որակական ընտրության չափորոշիչները, ինչը այս փոփոխության պահանջներից մեկն է):

⁴⁵ Այս դրույթը պետք է հասկացվի որպես նվազագույն պահանջ և այն չի արգելում Անդամ երկրին կամ պատվիրատուին՝ սահմանել պայմանագրի (վաղ) լուծման այլ պատճառներ: այս դրույթը ենթակա է ազգային (պայմանագրային) իրավունքով կարգավորման:

- Իրականացվել է կոնցեսիայի էական փոփոխություն, որը պահանջում է կոնցեսիայի շնորհման նոր ընթացակարգ;
- Կոնցեսիոները պետք է բացառված լինեն կոնցեսիայի շնորհման ընթացակարգից կոնցեսիայի շնորհման ժամանակ՝ բացառման պարտադիր հիմքերի պատճառով (օրինակ՝ քրեական իրավախախտման համար վերջնական դատապարտում);
- ԵՄԱԴ-ն խախտման ընթացակարգի արդյունքում գտել է, որ պատվիրատուն կոնցեսիան շնորհել է ԵՄԳՊ-ով և Կոնցեսիաների Հրահանգով ստանձնած պարտավորությունների խախտմամբ:

Անդամ երկրները պետք է նաև ապահովեն, որ կոնցեսիայի պայմանագրերի շնորհման կանոնները մոնիտորինգի ենթարկվեն մեկ կամ մի քանի մարմինների կողմից: Կոնցեսիայի պայմանագրերի շնորհմանը վերաբերող կանոնների կիրարկման և գործարկման մոնիտորինգի այս նոր պահանջը պետք է ապահովի Անդամ երկրներում ԵՄ իրավունքի միասնական և արդյունավետ կիրառումը:

Դատական պաշտպանություն

Ծառայությունների կոնցեսիային վերաբերող իրավական ռեժիմի ամենաէական փոփոխությունն այն է, որ հանրային պայմանագրերի շնորհման վերաբերյալ 89/665/ԵՏՀ և կոմունալ կազմակերպությունների գնումների վերաբերյալ 92/13/ԵՏՀ Բողոքարկման Հրահանգները կիրառելի են նաև կոնցեսիաների շնորհման նկատմամբ:⁴⁶ Չհաղթած մասնակիցներին պետք է տրվի կոնցեսիայի շնորհման ընթացքում ընդունված ցանկացած որոշման բողոքարկման հնարավորություն, և նրանք հետևաբար օգտվում են բողոքարկման հրահանգներում սահմանված նվազագույն երաշխիքներից:

⁴⁶ Տես հոդվածներ 46-47.